

9. ԵՐԵՔ ԵՂԲԱՅՐ

Կըլի, չըլի իրեք ախպեր: Տանց հար-մեկը մե պան ի ասելըի:

Մեյն ասելըի.—Ես Աստծե մեկ սուրու ոխճար կուզեմ մե ամարաթի մեչ:

Մեկ հրիչտակ կերևա կասի.—Ուզածտ տվիմ:

Առատունը կըլի, կիչկա. հըմեն էլ կըլի:

Էն մեկէլն էլ Աստծեն մե էքի կուզի, ըմեն եմիչներն էլ մեչն ըլի:

Էլ էն հրիչտակ կերևա, կասի.—Ուզածտ տվիմ:

Առատունը կըլի, կիչկա. հըմեն էլ կըլի:

Էն մեկէլն էլ կէթա, կընստի մե ճրի երգ, կընստի կասի.—Ես Աստծեն մե ամարաթ կուզեմ:

Էտ էլ կըլի:

Ստեփ կասի.—Ես մենակ էտ հէրի մեչ ընչի՞ եմ նստե, մե ուլուչաղ չունեմ:

Էնտեղեն էլ մե խարս կընցուցեն, էտ մարթ կէթա, խարս տարողին կասի.—Էտ խարսն տո՛ւ ընձի:

—Մենք կնացիր ենք, պերիր ենք,—էն մառն էլ կասի:

Ստեփ էն կասի.—Ծիան կլոխ թո՛ղ, որիս իտևեն էթա, դարն ի խարս:

Էն ծին չի էթա էն խարս տարողի իտևեն: Ստեփ էն խարսն կըտանեն ամարաթ, խարս տարող տարտակ կէթա:

Էտ հրիչտակը ջնքրոտ կըլի, էն ոխճրի տիրոչ կասի.—Ես յարա ունեմ, քելի քո ոխճարեն մեկ աղեկը մորթի՛, նրա էրունեն պե՛, քսեմ իմ յարաներուն:

Էտ մառն էլ կէթա, մե լաղար ոխճար կըպերի կըմորթի, էրունը կըտա քասրին: Էտ մառն առատունը կըլի, կիչկա, ոխճրքեր հըմեն էլ տառցե քար:

Հրիչտակը կէթա ամարաթի տիրոչ կասի.—Էտ խասուն խավողքերեն տո՛ւ ընձի:

Էտ կէթա էն քալ խավողքերեն կըպերի, էտ էլ առատունը կըլի, կիչկա հըմեն խավողքերն էլ էլե քար։

Հրիչտակը կէթա կըխասնի էն մեկէլ մարթուն։ Էն մառն էլ ավ-չի էր, կնացիր էր մեչան։

Էն քասը մարթ (հրիչտակ) կասի էն մարթու կնգան.—Դադո՛, քո լաճուտ վիզ կռի՛, էն էրունեն քսեմ իմ յարաներուն։

Էտ կնիկ կըլի ուր տղայի վիզ կըկռի, էրունը կըտա էտ քասբին, էտ կըքսի ուր յարաներուն, կըսաղանա. էն տղայի կլոխ զինք կը-վերցի կըտնի տղայի վրան, էտ տղան կըսաղանա։

Ստեփ հրիչտակ իչկաց, որ էտ մարթ աղեյ մարթ ի, որ ուր կնգան իչթարզ ի ուսուցե, ասաց.—Մարթ-կնիկ աղեկ ապրե՛ք ըն-չու հավիդյան,—կասի էտ մարթ ու կըխամփարցվի։